

Արմեն Յ. Մարության
Պատմ. գիտ. դոկտոր

ԲԱՔՎԻ ՀԱՅԵՐԻ 1918 Թ. ԶԱՐԴԵՐԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Մի մոռացված տարելիցի առիթով*

Բանալի բառեր – Բաքվի հայերի ջարդեր, Մեծ եղեռն, Հայոց ցեղասպանություն, պանթուրքիզմ, «հատուկ մտադրություն», Օսմանյան կայսրություն, երիտթուրքեր, մուսավաթականներ, օսմանյան բանակ, «Հատուկ կազմակերպություն», «Դահիճների կոմիտե»:

Մուտք

2018 թ. սեպտեմբերի 15-ին, երբ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում Թուրքիայի ու Ադրբեջանի նախագահների ներկայությամբ, թուրք հեծելազորայինների 1918 թ. համազգեստը հագած Ադրբեջանի սահմանապահ ծառայության մարտիկները հանդիսավորապես անցան 100 տարի առաջ հայերի արյունով ներկված փողոցներով, մեր երկրի արտգործնախարարությունից որևէ գնահատական կամ՝ արձագանք չհնչեց ցեղասպանական ակտը տոնելու բարբարոսական շոուի հետ կապված:

Ի թիվս այլ պատճառների՝ դա պայմանավորված է նաև նրանով, որ մինչ օրս այս հանցագործության գնահատման հարցի շուրջ գոյություն ունեն չորս հիմնական տեսակետներ: Գնահատականների որոշակի տարբերություններ ու նույնիսկ հակասություններ են նկատվել նաև անցած տասնամյակների հայ պատմագիտության մեջ:

1918 թ. սեպտեմբերի 15–17-ի Բաքվի հայերի ջարդերի կապակցությամբ իրենց դիրքորոշումն են արտահայտել ադրբեջանցի պատմաբանները¹, որոնց կարծիքով՝ կատարվածը ցեղասպանություն չի կարող որակվել այն

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.09.2018:

1 Տես Գեոցիդ ազերբայձանցեւ 1918–1920 ց. Ըոկումենտի և մատերիալ. Բաքու, 2001; Ազերբայձանսկայա Ըեմոկրատիկեսկայա Ղեսպուբլիկա, Բաքու, 1998; Մյւրաձաձե Մ., Մարտցեւսկիե սոբյիտիա. Բաքու, 1996; Բալաեւ Ա., Ազերբայձանսկոե նացիոնալնոե ձւիձեւեւ 1917–1918 ց., Բաքու, 1998; Փեւրալսկայա ղեւոլյուցիա և նացիոնալնոե օկրայնի. Մարտցեւսկիե սոբյիտիա 1918 ց. ւ Ազերբայձանե. Մոսկա, 2008; Նաձաձոֆ Բ., Ղիցօ վրաձ, շ. I, Բաքու, 1993, շ. II, Բաքու, 1994; Ւալիլօւ Ա., Գեոցիձ ղրօտիւ մուսուլմանսկօ ղեսելենիա Հաւաքաւզյա ւ ղիստօրիկեսկի ղիստօրիկեսկի, Բաքու, 2000; Կազիմաձե Փ., Բօրյա Հա Հաւաքաւզյե (1917–1921), «Ղիտերատյւրնի Ազերբայձան», 1993, N 1–3:

Ժ (ՃԶ) քաղրի. թիվ 3 (63), հայխա-սեպտեմբեր, 2018
ՎՎՎ համահայկական հանդես

պարզ պատճառով, որ այդ կերպ մահմեդականները հայերի նկատմամբ իրենց «փոխադարձ վրեժն» են լուծել ավելի վաղ՝ նույն 1918 թվականի մարտին տեղի ունեցած դեպքերի համար, որոնց ընթացքում իբր թե հայերն են մահմեդականների կոտորածներ իրականացրել: Անգամ ժամանակի ելքուպական մամուլ թափանցած այս տեսակետին կառչելով՝ ադրբեջանցի հեղինակները փորձում են արդարացնել 1918 թ. սեպտեմբերին թուրք-թաթարական ուժերի կողմից Բաքվի հայ բնակչության զանգվածային բնաջնջումը:

Երկրորդ մոտեցումը, որին ժամանակին տուրք են տվել նաև որոշ հայ ուսումնասիրողներ, Բաքվի հայերի ջարդերը դիտարկում էր որպես հայ ժողովրդի մի հատվածի նկատմամբ իրագործված՝ Մեծ եղեռնից առանձին մի հանցագործություն, ինչից ելնելով՝ Բաքվի հայության բնաջնջումը պարզապես որակվում էր որպես կոտորած: Դրանից բխում էր Բաքվի հայերի զանգվածային ջարդերն ու Մեծ եղեռնը միմյանց հակադրելու անսքող ձգտումը, համաձայն որի՝ դրանք ցեղասպանություն որակելու դեպքում իբր կնստեմացվեր Մեծ եղեռնը:

Երրորդ մոտեցման հիմքում ընկած էր այն դրույթը, որ Բաքվի հայերի 1918 թ. ջարդերի պարագայում բացակայում են հայ բնակչությանը ոչնչացնելու հատուկ հանցավոր մտադրությունը (**ինտենտը**) հաստատող ապացույցները, հետևաբար՝ այդ կոտորածները չեն կարող որակվել որպես ցեղասպանություն²:

Վերջապես, **չորրորդ** մոտեցումը հիմնվում էր Բաքվի հայերի կոտորածների՝ որպես մեկ միասնական պատմաքաղաքական գործընթացի՝ Հայոց ցեղասպանության հանցավոր քաղաքականության շարունակություն դիտարկող հայեցակետի վրա: Վերջին մոտեցումն իրենց աշխատություններում հիմնավորել և հիմնավորում են Վ. Դադրյանը³, Յու. Բարսեղովը⁴, Գ. Ստեփանյանը⁵ և այլ հեղինակներ:

1. Բաքվի «մարտյան դեպքերի» համար «փոխադարձ վրեժի» վարկածի քննությունը

Բաքվի հայերի 1918 թ. կոտորածները նույն թվականի «մարտյան դեպքերով» արդարացնելու համար ադրբեջանցի պատմաբանների կողմից առաջ քաշվող այսպես կոչված՝ «փոխադարձ վրեժի» վարկածը փաստորեն պատճենում է Հայոց ցեղասպանության ժխտման նպատակով թուրք-

2 ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի երկրորդ հոդվածում որպես ցեղասպանություն են դիտվում որևէ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբն ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ կատարված հետևյալ գործողությունները՝ 1. խմբի անդամների սպանությունը, 2. խմբի անդամներին ծանր մարմնական վնասվածքներ և մտավոր խանգարում պատճառելը, 3. կանխամտածված կերպով խմբի համար այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք միտված են նրա ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը, 4. խմբի ներսում ծնելիությունը կանխելու նպատակով միջոցների ձեռնարկումը, 5. խմբից երեխաների այլ խումբ բռնի փոխանցումը: Տե՛ս Կոնվենցիա «Օ предотвращении преступления Геноцида и наказания за него» ООН 9 декабря 1948 года, «Права человека. Сборник международных договоров», т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 780-781.

3 Տե՛ս **Լադրյան Վ.**, История армянского геноцида (этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа), Ер., 2007.

4 Տե՛ս Գեոցիդ армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, отв. редактор, автор предисловия и комментария **Ю.Г. Барсегов**, т. 1, М., 2002.

5 Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բարո քաղաքի հայության պատմությունը, եր., 2011.

քական պաշտոնական պատմագրության հորինած «միջհամայնքային բախումների» կամ «փոխադարձ ջարդերի» հայեցակարգը: Հայերի զանգվածային բնաջնջումն արդարացնող այդ հայեցակարգի համաձայն՝ մի կողմից՝ հայերի և մյուս կողմից՝ մահմեդականների միջև Օսմանյան կայսրության տարածքում տեղի են ունեցել «միջհամայնքային բախումներ», ինչի հետևանքով տուժել են ոչ միայն հայերը, այլև մահմեդականները: Այսինքն՝ փորձ է արվում տպավորություն ստեղծել, թե իբր՝ համաշխարհային պատերազմին զուգահեռ հայերի ու մահմեդականների միջև ընթացել է քաղաքացիական պատերազմ⁶:

Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական «հայեցակարգում» այս վարկածի ներառումը պատահական չէր: Ինչպես հայտնի է, հայերի զանգվածային սպանությունների կազմակերպման համար թուրքական իշխանությունները դիմեցին կայսրության մահմեդական բնակչության՝ քրդերի ու չերքեզների օգնությանը, որոնք իշխանությունների ձեռքին հայերին ոչնչացնելու գործիք դարձան: Ուստի հետագայում այս իրողությունն արձանագրելով թուրքական պաշտոնական պատմագրությունը փորձում էր պետությունից հեռացնել հանցագործության պատասխանատվությունը և այն տեղափոխել կայսրության ոչ թուրք մահմեդական բնակչության՝ քրդերի ու չերքեզների վրա:

Դժվար չէ նկատել, որ աղբրեջանցի հեղինակներն այս հարցում օրիգինալ չեն և պարզապես առաջնորդվել են իրենց թուրք գործընկերների՝ արտաքուստ տրամաբանված թվացող, սակայն իրականության հետ աղերս չունեցող շինծու մի վարկածով, որն ինչպես թուրքերի, այնպես էլ կովկասյան թաթարների պարագայում որևէ քննադատության չի դիմանում:

1918 թ. մարտի 18-22-ը Բաքվում տեղի ունեցած կռիվները սկսվեցին այն բանից հետո, երբ կովկասյան թաթարներից կազմված «Վայրի դիվիզիայի» զինված խմբերից մեկը զենքից անզույժ օգտվելու հետևանքով զոհված իրենց մարտական ընկերոջ թաղման արարողությանը մասնակցելու պատրվակով՝ «Էվելինա» շոգենավով Լենքորանից ժամանեց Բաքու: Ի պատասխան այս սադրանքի՝ Բաքվի Սովետը բոլշևիկ Ստ Շահումյանի անմիջական հրահանգով զինաթափեց զինված ջոկատի անդամներին: Մինչ այդ բանակցություններ վարելով Մուսավաթի ներկայացուցիչների հետ և փորձելով համատեղ ջանքերով կանխել երկու ժողովուրդների դիմակայությունը՝ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը և ՀՅ Դաշնակցությունն այդ ընթացքում հստակորեն չեզոք դիրքորոշում էին որդեգրել:

Մինչդեռ օգտագործելով զինված ջոկատի անդամների զինաթափման առիթը՝ Մուսավաթը փորձեց Բաքվում իշխանությունը վերցնել իր ձեռքը՝ իրենց զինված կազմավորումներին և Բաքվի ու նրա շրջակայքի թաթարական բնակչությանը հրահրելով զանգվածային գործողություններ սկսել ոչ միայն բոլշևիկյան իշխանությունների դեմ, այլև զինված հարձակումներ կատարել հայկական թաղամասերի վրա և կոտորել անզեն ու անպաշտպան հայերին⁷: Քանի որ քաղաքում իշխանությունը վերցնելու համար թա-

6 Տե՛ս **Տատրյան Վ.**, Հայոց ցեղասպանության ժխտման հիմնական փաստարկները. աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն., Եր., 2005, էջ 10:

7 Տե՛ս **Ալչուշեան Ա.**, Ռոստոմը Բագում, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթի», Պեյրոյթ, 1979, էջ 323:

թարների շուրջ 25 հազարանոց խառնամբոյսի ձեռնարկած գրոհը սպառնալիքի տակ դրեց Բաքվի հայության կյանքն ու ունեցվածքը, մինչ այդ երկաթուղու փակ լինելու պատճառով այստեղ կուտակված և դեպի Հայաստան ձեղքում կազմակերպելու համար հայրենակցական սկզբունքներով համախմբված հայկական գումարտակները Բաքվի Հայոց ազգային խորհրդի և ՀՅ Դաշնակցության հրահանգով դիմեցին պատասխան գործողությունների: Բաքվում իշխանությունը իր ձեռքը վերցնելու Մուսավաթի փորձը ձախողվեց, և նրանք դիմեցին Բաքվի Սովետի ղեկավարությանը՝ վերջինիս հրահանգով իրականացված պատժիչ գործողությունները դադարեցնելու խնդրանքով: Ի պատասխան՝ Մուսավաթ կուսակցությունից պահանջվեց անվերապահորեն ձանաչել խորհրդային իշխանությունը և Բաքվից ու նրա մերձակայքից հեռացնել «Վայրի դիվիզիայի» զինված ստորաբաժանումները⁸:

Մարտյան դեպքերի համար Բաքվի բոլշևիկյան իշխանություններին, Հայոց ազգային խորհրդին ու ՀՅ Դաշնակցությանը միակողմանիորեն մեղադրող ադրբեջանցի պատմաբանները «մոռանում են» նշել, որ քաղաքի անդորրը վերականգնելու և Բաքվի հայ ու թաթար բնակչության միջև խաղաղություն հաստատելու նպատակով կազմվել էր հաշտարար պատգամավորական խումբ, որում ընդգրկվել էին բժիշկ Լևոն Աթաբեկյանը, ռուս սոցիալիստ հեղափոխական Դենեժկինը և թաթար սոցիալ-դեմոկրատ Աղանը: Բանագնացների մեքենան գնդակոծվեց հենց իրենց՝ թաթարների դարանակալած խմբի կողմից, բոլոր բանագնացները սպանվեցին և հաշտարարության նախաձեռնությունը տապալվեց: Նախնական պայմանավորվածության համաձայն խումբը գլխավորելու էր Բաքվի ազգային խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ապագա նախագահ Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամը), որը երջանիկ պատահականությամբ չնստեց բանագնացների մեքենայի մեջ և ողջ մնաց⁹:

Ադրբեջանցի հեղինակները անտեսում են նաև այն կարևոր փաստը, որ եթե հայերը Բաքվի մահմեդական բնակչությանը բնաջնջելու մտադրություն ունենային, ապա կոչնչացնեին նաև կոիվներին չմասնակցած և հայկական ուժերի հակահարվածներից հետո գերի ընկած հազարավոր մահմեդականներին: Մինչդեռ վրեժխնդրության դեպքերից խուսափելու համար ՀՅԴ առաջնորդ Ռոստոմի հանձնարարությամբ՝ մահմեդականները տեղափոխվեցին հայկական ուժերի կողմից պաշտպանվող շինություններ և մինչև հաշտություն կնքելը նրանք այնտեղ ոչ միայն պաշտպանված էին, այլև ապահովված էին սննդով: Հաշտությունը կնքելուց հետո Հայոց ազգային խորհրդի, Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի գործադիր կոմիտեի նախագահության անդամներից և Բաքվում Պարսկաստանի հյուպատոսից ու հյուպատոսության աշխատակիցներից կազմված հանձնաժողովը այցելեց գերիների հանրակացարաններ: Գերիների հարցուփորձից պարզ դարձավ, որ նրանք անսահմանորեն գոհ էին իրենց պաշտպանած հայերից: Հանձնաժողովը հատուկ արձանագրություն կազմեց, ինչից հետո բոլոր

8 Տե՛ս **Բալաև Ա.**, Февральская революция и национальные окраины. Мартовские события 1918 г. в Азербайджане, с. 35.

9 Տե՛ս **Ալշուքեան Ա.**, Ռոստոմը Բազում, «Ռոստոմ. մահուան վաթսուներեակն առթի», էջ 344:

գերիներն ազատ արձակվեցին¹⁰: Այս փաստը խաղաղ մահմեդական բնակչության նկատմամբ հայերի հանդուրժողականության մասին վկայող ավելի քան խոսույն ապացույց է:

Եթե անգամ Մուսավաթի կազմակերպած սադրանքից հետո Բաքվի Սովետի հրահանգով ձեռնարկված պատասխան գործողություններից տուժել է նաև քաղաքի խաղաղ մահմեդական բնակչությունը, ապա դրա պատասխանատուն բացառապես բոլշևիկյան իշխանություններն էին: Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը և ՀՅ Դաշնակցության գլխավորած հայկական զինված ուժերը մինչ այդ համառորեն մերժել են Բաքվի Սովետը գլխավորող բոլշևիկ Ստ Շահումյանի կողմից արված համագործակցության առաջարկները և միայն թաթարական հսկայական զինված խառնամարտի Բաքու ներխուժելուց և հայ բնակչությանը թիրախավորելուց հետո են դիմել պատասխան գործողությունների:

2. Բաքվի հայերի ջարդերի, որպես առանձին հանցագործության մասին թեզի քննությունը

Բաքվի հայերի բնաջնջումը, ճիշտ այնպես, ինչպես դրան նախորդած հայ բնակչության կոտորածները Շիրակի դաշտավայրում, Ախալքալաքի գավառում ու Լոռիում, Նուխիի, Արեշի, Գյոկչայի և Շամախիի գավառներում, այսինքն՝ Արևելյան Հայաստանում ու Արևելյան Այսրկովկասում, ոչ այլ ինչ էին, քան երիտթուրքական կառավարության կողմից ծրագրված և հետևողականորեն իրականացված հայ ժողովրդին իսպառ բնաջնջելու պանթուրքական քաղաքականության շարունակությունը: Բաքվի հայերի կոտորածը թուրքական իշխանությունների ցեղասպանական քաղաքականության շղթայի օղակներից ու այդ հրեշավոր հանցագործության արարներից մեկն էր: Ուստի Արևելյան Հայաստանում ու Արևելյան Այսրկովկասում իրականացված հայ բնակչության կոտորածները պետք է գնահատվեն որպես հայ ժողովրդի նկատմամբ իրագործված մեկ ընդհանուր հանցագործության՝ Մեծ եղեռնի շարունակություն:

Երիտթուրքական կառավարության ցեղասպանական քաղաքականության հիմքում ընկած էր պանթուրքիզմի գաղափարախոսությունը, որի համաձայն Օսմանյան կայսրության տարածքներում բնակվող տարբեր կրոնների ու ազգությունների ժողովուրդներից պետք է ստեղծվեր միատարր թուրքական բնակչության, ինչը ենթադրում էր բոլոր ոչ թուրք ժողովուրդների թուրքացում կամ ոչնչացում: Պանթուրքիզմի գաղափարախոսությամբ ենթադրվում էր նաև «Մեծ Թուրան» համաթուրքական պետության ստեղծումը, որը պետք է կյանքի կոչվեր Օսմանյան կայսրության շուրջ թուրքախոս բնակչություն ունեցող տարածքների միավորումով: Պանթուրքիզմի գաղափարախոսների երազած «Մեծ Թուրանի» սահմանները հյուսիսում տարածվելու էին մինչև Ուրալ, իսկ արևելքում հասնելու էին մինչև Ալթայ՝ ներառելով Այսրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Դրիմի, Պովոլժիեի, Կենտրոնական Ասիայի տարածքները և այլն¹¹:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 323:

¹¹ Տե՛ս Худавердян К., Саакян Р., Геноцид армян сквозь призму десятилетий, Ер., 1995, с. 19.

Հեղափոխական ցնցումների հետևանքով Ռուսաստանի թուլացումը երիտթուրքերի շրջանում հույսեր արթնացրեց, որ եկել է համաթուրանական գաղափարները կյանքի կոչելու ժամանակը: Այդ նպատակով նրանք 1918 թ. Այսրկովկասում զգալիորեն ակտիվացրին իրենց էմիսարների և օսմանյան բանակի Գլխավոր շտաբի սպաների գործունեությունը: Այսրկովկասի մահմեդականների շրջանում գաղտնի աշխատանքների համակարգման գործում թուրք էմիսարներից հատկապես աչքի էր ընկնում Հասան Ռուշենը, որը 1918 թ. մարտին գաղտնի առաքելությամբ հայտնվեց Այսրկովկասում, կարճ ժամանակում կապեր հաստատեց Թուրքմենստանի, Արևելյան և Հյուսիսային Կովկասի թուրքամետ տարրերի հետ, ստեղծեց գործակալական ցանց: Նրա ջանքերով հիմնվեց «Կովկասի հատուկ վարչությունը», որը հակահայկական գործունեությունը համակարգող մարմնի դեր ստանձնեց¹²:

Ավստրիական արխիվային նյութերից երևում է, որ Հ. Ռուշենից բացի՝ Այսրկովկաս էին գործուղվել նաև օսմանյան բանակի Գլխավոր շտաբի երկու սպաներ, որոնց առաջադրանք էր տրվել ռազմաձևկատը լքող ռուս զինվորներից զենք գնելու միջոցով հայերի դեմ զինել մահմեդական բնակչությանը¹³:

Ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ ժանդարմերիայի, «Հատուկ կազմակերպության» («Թեշքիլաթ-ի մահսուսե») և քրդական հրոսակախմբերի հետ մեկտեղ ակտիվ դերակատարում են ունեցել օսմանյան բանակի ստորաբաժանումները: Այս հանգամանքը հաստատվում է 1915 թ. մայիսի 27-ին Թալեաթ փաշայի կողմից կառավարությանը ներկայացրած «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի դրույթներով, որը մայիսի 30-ին քննարկվեց և հաստատվեց կառավարության կողմից, իսկ հունիսի 1-ին մամուլում հրապարակելուց հետո այն օրինական ուժի մեջ մտավ¹⁴: Օրենքի առաջին հոդվածի համաձայն, եթե տեղի բնակչության կողմից կառավարության քայլերի դեմ նկատվեր որևէ հակազդեցություն, ապա հրահանգվում էր անմիջապես ձեռնարկել պատժի ամենախիստ միջոցներ՝ ռազմական ուժի օգտագործմամբ և վճռականորեն ձնշել դիմադրությունը¹⁵: Ակնհայտ է, որ տվյալ հոդվածը կարող էր կամայական մեկնաբանություն ստանալ դրա կատարողների կողմից, որոնք միայն նման բանի էին սպասում, որ հայերին կոտորելու գործն ավելի ոգևորված շարունակեին: Երկրորդ հոդվածով էլ իրավունք էր տրվում գյուղերի ու ավանների առանձին բնակիչներին կամ ամբողջ բնակչությանն ուղարկել այլ շրջաններ՝ ելնելով ռազմական նկատառումներից կամ այն դեպքերում, երբ նրանց կողմից նկատվեին լրտեսության ու դավաճանության դեպքեր¹⁶: Փաստորեն տեղի բնակչության քայլերի որակումը օրենքով թողնվում էր օսմանյան բանակի կորպուսների և դիվիզիաների

12 Տե՛ս **Swietochowski T.**, Russian Azerbaijan. 1905–1920. The Sharpening of National Identity in a Muslim Community, Cambridge, Cambridge University Press, 1985, p. 119–120.

13 Տե՛ս **Օհանջանյան Ա.**, 1915 թվական: Անեքրելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին), Եր., 1997, էջ 143:

14 Տե՛ս **Մաքրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը, Եր., 2009, էջ 180:

15 Տե՛ս **Մահակյան Ռ.**, Ցեղասպանության պատմությունից, Եր., 1990, էջ 291:

16 Տե՛ս նույն տեղում:

հրամանատարության և տեղական իշխանությունների հայեցողությանը, ինչի հիման վրա էլ որոշվելու էին նրանց նկատմամբ պատժամիջոցների ձևերը: Այսպիսով, հայերի կողմից դիմադրական, լրտեսական կամ դավաճանական գործողություններն ապացուցելու կարիք չկար, բավական էր, որ նման կասկածներ ունենային տվյալ տարածքում տեղակայված օսմանյան բանակի ստորաբաժանման հրամանատարությունը կամ քաղաքացիական պաշտոնյաները և դրա հիման վրա կարող էին դիմել ռազմական ուժի կիրառման, այսինքն՝ ֆիզիկական բնաջնջման, կամ տեղահանման, ինչը փաստացի նույն բնաջնջումն էր: Իսկ ահա ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի երկրորդ հոդվածում այդ հանցագործության տակ մասնավորապես հասկացվում է էթնիկ խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացումը¹⁷:

Պատերազմի առաջին տարիներին ռուս-թուրքական ռազմաձակատում ռուսական բանակի առաջխաղացումը և Արևմտյան Հայաստանի տարածքների մի մասի գրավումը երիտթուրքական իշխանություններին դեռևս չէր ընձեռում հայ ժողովրդին ամբողջապես ոչնչացնելու հնարավորություն, ուստի նրանք նախ իրականացրին արևմտահայերի բնաջնջումը՝ Մեծ եղեռնը: 1918 թ. ռուս-թուրքական ռազմաձակատի կազմալուծման հետևանքով օսմանյան բանակի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, որպեսզի արևմտահայության բնաջնջումն իրականացնելուց հետո նրա ստորաբաժանումներն անցնեին արևելահայության, ինչպես նաև կոտորածից հրաշքով փրկված ու Այսրկովկաս գաղթած արևմտահայության մնացորդացի ոչնչացմանը: Օսմանյան բանակի ստորաբաժանումներին միացան կովկասյան թաթարների գինված կազմավորումները, որոնք միասնաբար շարունակեցին հայերի բնաջնջումը Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում:

Վերը նշվածից ելնելով՝ ակնհայտ է դառնում, որ Բաքվի հայերի 1918 թ. կոտորածները և Մեծ եղեռնը պարզապես չեն կարող միմյանց հակադրվել, քանզի ոչ միայն մեկը մյուսի շարունակությունն էր, այլև դրանք փոխկապակցված էին պատճառահետևանքային կապերի առումով:

3. Բաքվի հայերի ջարդերի պարագայում «հատուկ մտադրության» բացակայության մասին թեզի քննությունը

Բաքվի հայերի 1918 թ. ջարդերը որպես Մեծ եղեռնի շարունակություն և Հայոց ցեղասպանության հանցավոր քաղաքականության մի փուլ համարելու պարագայում ինքնըստինքյան վերանում է այդ կոտորածների ժամանակ հայ բնակչությանը ոչնչացնելու հատուկ հանցավոր մտադրության ապացուցման անհրաժեշտությունը: Ավելին, Բաքվի հայերի 1918 թ. ջարդերը առանձին հանցագործություն դիտելու պարագայում էլ որոշակի փաստաթղթերի ու փաստերի հիման վրա այդ կոտորածների նախապես ծրագրված լինելու հանգամանքը լիովին ապացուցվում է:

Ադրբեջանի ներքին գործերի նախարար Բեհրուդ Խան-Ջիվանշիրը 1918 թ. հուլիսի վերջերին Մուսավաթի Բաքվի կոմիտեին գաղտնի նամակ է ուղարկում, որում նշվում էր, որ Բաքուն գրավելուց հետո քաղաքի հայ մտա-

17 Տե՛ս Конвенция «О предотвращении преступления Геноцида и наказания за него» ООН 9 декабря 1948 года, Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 780.

վորականները պետք է առանձնացվեն և ոչնչացվեն¹⁸: Դժվար չէ կռահել, որ Գանձակից ուղարկված Ջիվանշիրի այդ գաղտնի նամակը գրվել էր հայ մտավորականության ոչնչացման գործում փորձառություն ունեցող երիտթուրքերի խորհրդով:

Հայերին բնաջնջելու վերաբերյալ Ջիվանշիրի գաղտնի հրամանագրերից մեկն էլ հրապարակվեց նրան սպանած վրիժառու Միսաք Թողաքյանի հանդեպ Կ. Պոլսում 1921 թ. հոկտեմբերին անգլիական ռազմական ատյանի կազմակերպած դատավարության ընթացքում: Նուխի, Արեշի, Շամախու և Բաքվի քաղաքագլուխներին ուղղված Ջիվանշիրի գաղտնի հրամանում նշվում էր, որ թուրք ցեղերի քաղաքական ճանապարհին խոչընդոտ հանդիսացող հայ ցեղը բնաջնջելու նպատակով բոլոր թուրք ցեղերը սրբազան պատերազմի են ելել, որպեսզի նրանց դիակների վրայով հասնեն իրենց առջև դրված նպատակներին: Դրանից ելնելով կարգադրվում էր չխնայել ոչ ոքի և հավատարմորեն կատարել հայերին վերացնելու հրահանգները¹⁹:

Մուսավաթական կառավարության ներքին գործերի նախարարի այս գաղտնի հրամանագիրը գրեթե նույնությամբ կրկնում էր Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի՝ կայսրության նահանգապետերին ուղղված գաղտնի հրամանագրերի բովանդակությունը: Եթե Արևմտյան Հայաստանում հայերի բնաջնջումն իրականացվում էր Հատուկ կազմակերպության («Թեշքիլաթ-ի մահսուսեի») միջոցով, ապա դրա օրինակով կովկասյան թաթարներից ստեղծվել էր «Դահիճների կոմիտե» («Ջեղադ քոմիթեսին»), որի միջոցով իրականացվում էր Բաքվի նահանգի հայության զանգվածային բնաջնջումը²⁰: Հատկանշական է, որ թուրք-ադրբեջանական զորքերի կողմից Բաքվի գրավումից անմիջապես հետո հենց Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատուներից մեկը՝ Հատուկ կազմակերպության նախագահ Բեհաէդդին Շաքիրը նշանակվեց Բաքու քաղաքի ոստիկանապետ²¹: Այս փաստերի համադրությունը հիմք է տալիս պնդելու, որ Բաքվի նահանգի հայության բնաջնջումը համակարգող մարմինը՝ «Դահիճների կոմիտեն» Հատուկ կազմակերպության օրինակով ստեղծվել և գործում էր հենց Բեհաէդդին Շաքիրի մտահաղացմամբ և այդ «ծառայությունները» բարձր գնահատելով է, որ մուսավաթականները նրան արժանացրին Բաքվի ոստիկանապետի պաշտոնին:

Եթե թուրք-ադրբեջանական զորքերն իսկապես մտադրություն չունեին բնաջնջելու Բաքվի հայերին, ապա նրանք առնվազն պետք է թույլ տային, որ այդ բնակչությունը նավերով հեռանար քաղաքից: Սակայն Բաքու ներխուժելուց անմիջապես հետո նկատելով շոգենավերի մեկնումը՝ թուրքերը ուժգին հրետակոծության ենթարկեցին ոչ միայն նավամատույցը, այլև շոգենավերը, ինչի հետևանքով փախստականներով լցված շոգենավերից մեկը ջրասույգ եղավ²²:

Թեև Նուրի փաշայի անունից թուրքական հրամանատարությունը

18 Տե՛ս Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թողաքեանի դատավարությունը անգ. Ջինտրական ատեանին առջև, Աթէնք, 1936, էջ 150:

19 Տե՛ս Թողաքեան Մ., Օրերուս հետ, Բ. հրատարակութիւն, Պէյրոս, 1963, էջ 460:

20 Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը, էջ 366:

21 Տե՛ս **Дадриян В.**, История армянского геноцида (этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа), с. 454.

22 Տե՛ս Ստեփանյան Գ., նշվ. աշխ., էջ 399:

Կենտրոնական Կասպիի կառավարությանը, Դանիայի ու Պարսկաստանի հյուպատոսներին խաղաղ բնակչության անձի և գույքի ապահովության երաշխիքներ էին տրվել, այդուհանդերձ, թուրքական զորքերի հրամանատարության և մուսավաթական կառավարության հանձնարարությամբ՝ թուրք-թաթարական հրոսակախմբերը Ադրբեջանի կառավարության ղեկավար Ֆ. Խան-Խոյսկու և ներքին գործերի նախարար Բ. Խան-Ջիվանշիրի ղեկավարությամբ սեպտեմբերի 15-17-ին իրականացրեցին Բաքվի հազարավոր հայերի կոտորածը՝ կողոպտելով նրանց ունեցվածքը²³:

Այն, որ հայերին խնայելու վերաբերյալ թուրքերի հավաստիացումները չէին իրագործվելու, ակնհայտ դարձավ, երբ Բաքուն գրավելուց հետո Ֆ. Խան-Խոյսկու և Բ. Խան-Ջիվանշիրի ստորագրությամբ թուրքերեն և ռուսերեն լեզուներով տարածվեց մի հայտարարության, որում ասվում էր, որ թուրքական զինվորները փրկեցին Ադրբեջանի մայրաքաղաքը, որ Բաքվում պետք է կարգ ու կանոն հաստատվի, իսկ հայերը ենթարկվելու են ծանր պատիժների²⁴: Բաքվում հաստատված նոր իշխանությունների ծանր պատիժներից չխուսափեցին անգամ հայ որբերը: Մ. Թողաքյանի դատավարության ժամանակ վկայություն տվող Բաքվի հայկական որբանոցի տնօրեն Ա. Խանդեյանը հայտնեց, որ քաղաք ներխուժելուց հետո թուրքերը և ադրբեջանցիները չխնայեցին անգամ որբանոցում եղած շուրջ 500 հայ որբերին²⁵:

Ամփոփելով նշենք, որ Բաքվի հայերի 1918 թ. կոտորածներն ամենևին էլ պայմանավորված չէին քաղաքի մահմեդական բնակչության այսպես կոչված «փոխադարձ վրեժով»: Դրանք հայ բնակչության մի հատվածի նկատմամբ կատարված առանձին հանցագործություն չէին, այլ երիտթուրքերի կողմից ծրագրված ու հետևողականորեն իրագործվող ամբողջ հայ ժողովրդի բնաջնջման՝ ցեղասպանության հանցավոր քաղաքականության փուլերից մեկը, որին միացան կովկասյան թաթարները: Այդ հանգամանքից անկախ՝ Բաքվի հայերի 1918 թ. ջարդերն առանձին դիտարկելու պարագայում անգամ, որոշակի փաստաթղթերով ու փաստերով ապացուցվում է հայ բնակչությանը ոչնչացելու՝ ցեղասպանության հանցագործությանը բնորոշ հատուկ հանցավոր մտադրության ամկայությունը: Այսպիսով, պատմական փաստերի և միջազգային իրավունքի նորմերի հիման վրա կարելի է պնդել, որ Բաքվի հայերի 1918 թ. ջարդերը միանգամայն համապատասխանում են ցեղասպանության հանցագործության հատկանիշներին:

Արմեն Յ. Մարության – 50-ից ավելի գիտական հոդվածների, հայերեն, ռուսերեն և անգլերեն 10 գրքի և փաստաթղթերի չորս ժողովածուների հեղինակ: Գիտական հետաքրքրություններն են՝ հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության, մասնավորապես Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերը, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 400:

24 Տե՛ս **Թորաքեան Մ.**, նշվ. աշխ., էջ 454:

25 Տե՛ս Պէհպոտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորաքեանի դատավարութիւնը անգ. Զինուորական ատենակին առջև, էջ 22:

Summary

THE HISTORICAL–LEGAL ESTIMATION OF THE MASSACRES OF THE ARMENIANS OF BAKU IN 1918

On a forgotten anniversary

Armen Ts. Marukyan

Key words – Massacres of the Armenians of Baku, Genocide of Armenians, Pan – Turkism, “special intention”, Ottoman Empire, Young Turks, musavatist, Ottoman army, “The special organization”, “Committee of executioners”.

Massacres of the Armenians of Baku of 1918 was not a separate crime against one part of Armenian people but was one of stages of the Ottoman Empire’s consistent policy of full destruction of all Armenian people planned and carried out by the government of Young Turks which was later joined by the musavatists, too.

Certain documents and facts confirm the existence of “the special intention” of the commanders of Ottoman army and military formations of musavatists in the extermination of the Armenian population which is a characteristic element of genocide.

On the basis of historical facts and the international norms of rights it is possible to claim that massacres of the Armenians of Baku of 1918 can fully be qualified as genocide.

Резюме

ИСТОРИКО–ПРАВОВАЯ ОЦЕНКА ПОГРОМОВ БАКИНСКИХ АРМЯН 1918 ГОДА

По поводу одной забытой годовщины

Армен Ц. Марукян

Ключевые слова – погромы бакинских армян, Геноцид армян, пантюркизм, «особый умысел», Османская империя, младотурки, мусаватисты, османская армия, «Особая организация», «Комитет палачей».

Погромы бакинских армян 1918 года являлись не отдельным преступлением против части армянского народа, а одним из этапов запланированной и осуществляемой правительством Османской империи последовательной политики полного истребления армянского народа, к претворению которой затем присоединились и мусаватисты.

Конкретными документами и фактами подтверждается наличие у командования османской армии и военных формирований мусаватистов «особого умысла» истребления армянского населения, что является характерным элементом преступления геноцида.

На основе исторических фактов и норм международного права можно утверждать, что погромы бакинских армян 1918 года вполне можно квалифицировать как геноцид.

REFERENCES

1. **Alchugean A.**, Rostomy Bagvum, Rostom. mahvan vatsunamyakin artiv, Peyrit, 1979. (in Armenian)
2. Azerbaydjanskaya Demokraticeskaya Respublika, Baku, 1998. (in Russian)
3. **Balaev A.**, Azerbaydjanskoye nacionalnoye dvigienie v 1917–1918 gg., Baku, 1998. (in Russian)
4. **Balaev A.**, Fevral'skaya revolyuciya i nacionalniye okraini. Martovskiye sobitiya 1918 g. v Azerbaydjane, Moskva, 2008. (in Russian)
5. **Dadriyan V.**, Istoriya armyanskogo genocida (etnicheskij konflikt ot Balkan do Anatolii i Kavkaza), Erevan, 2007. (in Russian)
6. Genocid armyan: otvetstvennost Turcii i obyazatelstva mirovogo soobshestva. Dokumenti i kommentarij. Sostavitel, otv. redactor, avtor predisloviya i kommentariya **Y. G. Barsegov**, t. 1, Moskva, 2002. (in Russian)
7. Genocid azerbaydjancev v 1918–1920 gg. Dokumenti i materialy, Baku, 2001. (in Russian)
8. **Kasimzade F.**, Borba za Zakavkazye (1917–1921), «Litertaturni Azerbaydjan», 1993, № 1–3. (in Russian)
9. **Khalilov A.**, Genocid protiv musulmanskogo naseleniya Zakavkazya v istoricheskikh istochnikakh, Baku, 2000.
10. **Khudaverdyan K., Saakyan R.**, Genocid armyan skvoz prizmu desyatiletij, Yerevan, 1995. (in Russian)
11. **Muradzade M.**, Martovskiye sobitiya, Baku, 1996. (in Russian)
12. **Nadjafov B.**, Lico vraga, ch. I, Baku, 1993, ch. II, Baku, 1994. (in Russian)
13. **Ohanjanyan A.**, 1915 tvakan. Anherqeli vkayutyunner (Avstriakan vaveragrery Hayoc cexaspanutyany masin), Yerevan, 1997. (in Armenian)
14. Pehput khan Givanshiri spanich Misaq Torlaqyani datavarutyuny ang. Zinvorakan atyanin argev, Atenq, 1936. (in Armenian)
15. Prava cheloveka. Sbornik megdunarodnikh dogovorov, t. 1, ch. 2, Universalniye dogovori OON, Nju–York i Geneva, 1994. (in Russian)
16. **Safrastyan R.**, Osmanyan kajrutyun. Cexaspanutyany tsragri tsagumnabanutyuny, Yerevan, 2009.
17. **Sahakyan R.**, Cexaspanutyany patmutyunic, Yerevan, 1990. (in Armenian)
18. **Stepanyan G.**, Baqu qakhaqi hayutyany patmutyuny, Yerevan, 2011: (in Armenian)
19. **Swietochowski T.**, Russian Azerbaijan. 1905–1920. The Sharpening of National Identity in a Muslim Community, Cambridge, Cambridge University Press, 1985.
20. **Tatryan V.**, Hayoc cexaspanutyany gkhtman himnakan pastarknery. Axavaxman ev kexcararutyany usumnasirutyun, Yerevan, 2005. (in Armenian)
21. **Torlaqean M.**, Ozerus het, B. hratarakutyun, Pejrut, 1963. (in Armenian)